

Լ.Ա. Մկրտչյան

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՑ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ՝ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Պատմաճարտարապետական հուշարձանները յուրահատուկ, գեղագիտական արժեք են ներկայացնում, որոնք անուշադրության պատճառով ենթարկվում են նաև փարբեր վրանգավոր աղետալի երևույթների ազդեցությանը:

Հիշյալ երևույթների ազդեցությունը հուշարձանների վրա քիչ է ուսումնասիրված, որի պատճառով դրանց ընդհանրապես ուշադրություն չի դարձվում: Վիճակն էլ ավելի բարդ է սահմանամերձ համայնքներում, որտեղ հայկական հետքերի բացահայտումն ու պահպանումը չափազանց կարևոր ու հրապապ խնդիր է ներկա պայմաններում:

Առանցքային բառեր. Կարմիր Եղջի, Ճամբարակ, Թթուջուր, Ջիլ, Խաչքար, բնական վրանգավոր երևույթ:

XXI դարի ռազմավարական նպատակներից են էկոլոգիական գլոբալ հիմնախնդիրների, մարդածին և ոչ մարդածին աղետալի երևույթների, դրանց առաջացման և ակտիվացման ռիսկերի գնահատումը: Վերոգրյալ աղետալի հետևանքները շրջակա միջավայրի փոփոխություններն են, որոնք վրանգավոր են մարդկանց կյանքի ու առողջության համար և բացառում կամ դժվարացնում են հասարակության տնտեսական գործունեությունը: Աղետները ցանկացած տնտեսական գործունեության անցանկալի, սակայն անխուսափելի ուղեկիցներն են:

Երբեմն աննպաստ և վրանգավոր երևույթների տարածքն այնքան փոքր է լինում, որ մի քանի մետր այն կողմ անցնելով, հայտնվում են անվտանգ գոտում: Սակայն աննպաստ և վրանգավոր երևույթների ոչ բոլոր տեսակներն են այդ հնարավորությունը տալիս [2]:

Տարերային աղետներից կախվածությունը շարունակում է մնալ ողջ մարդկության, և մասնավորապես, Հայաստանի համար առավել հրատապ խնդիրներից մեկը: Չնայած գիտատեխնիկական առաջընթացին և աղետալի հետևանքներով վրանգավոր երևույթների դեմ կիրառվող միջոցառումներին, տարերային աղետներից կրած սոցիալական և նյութական կորուստներն անընդհատ ավելանում են: Վրանգավոր և տեխնածին գործընթացների աճի հիմնական պատճառները պայմանավորված են ինչպես այդ գործընթացների ակտիվացմամբ և տնտեսական գործունեությամբ, այնպես էլ անվտանգության ապահովման նպատակով կատարված չմտածված տարաբնույթ սխալներով:

Ջարգացած երկրների մեծամասնությունն անցնում է անվտանգության ապահովման նոր ռազմավարության, հիմնականում բնական աղետալի հետևանքներով վրանգավոր երևույթների ուղղությամբ:

Աղետալի երևույթները բացասաբար են անդրադառնում ոչ միայն բնակչության և տնտեսության վրա, այլև՝ պատմաճարտարապետական հուշարձանների վրա: Հուշարձանները շատ տուժել և տուժում են այն բոլոր երևույթներից, որոնք տեղի են ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում: Անդրադառնալով ՀՀ-ում տեղի ունեցող բնական աղետալի երևույթներին և դրանց հետագա ուսումնասիրություններին՝ կարելի է նշել, որ Հայաստանում

առանձին աղետալի երևույթների վերաբերյալ տարբեր ժամանակներում իրականացվել են որոշակի ուսումնասիրություններ Հայպետհիդրոմետի, հետագայում արտակարգ իրավիճակների նախարարության և մի շարք մասնագետների կողմից, բայց վերոգրյալի համալիր ուսումնասիրությունները լիարժեք չեն: Իսկ դրանց ազդեցությունը հուշարձանների վրա ոչ միայն ուսումնասիրված չեն եղել, այլև դրանց ընդհանրապես ուշադրություն չի դարձվել: Վիճակն էլ ավելի բարդ է սահմանամերձ համայնքներում, որտեղ հայկական հետքերի բացահայտումն ու պահպանումը չափազանց կարևոր ու հրատապ է ներկա պայմաններում: Այս բացը լրացնելու համար փորձեցինք բացահայտել, ուսումնասիրել և քարտեզագրել հատկապես, Գեղարքունիքի մարզի սահմանամերձ համայնքների պատմաճարտարապետական հուշարձանները, դրանք վերլուծել աղետների ռիսկի տեսանկյունից:

Այժմ փորձենք ներկայացնել Գեղարքունիքի մարզի սահմանամերձ համայնքներում հանդիպող վտանգները, վերլուծենք դրանց ազդեցությունը համայնքների սահմաններում գտնվող պատմաճարտարապետական հուշարձանների վրա: Յուրաքանչյուր հուշարձանի համար տրվում են առաջարկություններ և լուծման ուղիներ, որոնք, համապատասխան մասնագետների հետ քննարկելու և հավանության արժանանալու դեպքում կարելի է իրականացնել:

Հայաստանը, գտնվելով Ալպ-Հիմալայան գեոսինկլինալային գոտում, համարվում է սեյսմոակտիվ շրջան, որտեղ հաճախակի են երկրաշարժերը, այդ թվում՝ նաև ավերիչ: Երկրաշարժերից տուժել են բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ, որոնց մեծ մասն այլևս չի վերականգնվել:

Գեղարքունիքի մարզում երկրաշարժերը հաճախակի երևույթներ են: Միայն վերջին երեք տարվա ընթացքում մարզի տարածքում տեղի են ունեցել բազմաթիվ երկրաշարժեր, որոնցից 5-ը եղել են 5-6 բալլ ուժգնությամբ, իսկ երկրաշարժի օջախը եղել է Շորժայից 3 կմ հյուսիսարևելք՝ 10 կմ խորության վրա: Սա վկայում է այն մասին, որ Գեղարքունիքի մարզի ճամբարակ խոշորացված համայնքի տարածքը գտնվում է բարձր սեյսմիկ գոտում: Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ վերոնշյալ համայնքներում խորհրդային տարիներին սահմանվել է մինչև 7 բալլ սեյսմիկ գոտի (պետական փաստաթղթերի համաձայն): Իսկ հուշարձանների համար հետազոտությունները քիչ են և բավարար չեն այդպիսի տվյալները:

Ներկայացնենք այն հուշարձանները, որոնք վտանգված են երկրաշարժի տեսանկյունից:

Ճամբարակ քաղաքի Վերին Ճամբարակի թաղամասի հյուսիսային եզրին գտնվում է Գրիգոր Լուսավորիչ միջնադարյան հայկական առաքելական եկեղեցին: Այն հաշվառված է Հայաստանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում:

Անմշակ քարերով շարված և եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին կիսավեր ու վթարային վիճակում է, մասնավորապես՝ մասնակի կանգուն են արևելյան խորանն ու գմբեթարդը, զույգ ավանդասենյակները, արևմտյան և հյուսիսային պատերը: Միակ մուտքը հարավային կողմից է եղել, որից գրեթե ոչինչ չի պահպանվել հարավային պատի մոտ՝ արտաքուստ, գետնին կանգնեցված:

Եկեղեցին բազմիցս նորոգվել ու վերաշարվել է: Այդ մասին վկայում են որմերի տարբեր հատվածներում օգտագործված, ժամանակագրորեն 10-13-րդ դարերին բնորոշ մեկ տասնյակից ավելի խաչքարերը, որոնք 17-18-րդ դարերում դիտվել են իբրև շինաքարեր՝ առանց կարևորելու խաչքարի՝ սրբազան կոթողի նշանակությունը:

Եկեղեցու ավերման հիմնական պատճառը եղել է երկրաշարժը: Ներկայիս կիսականգուն շինությունը ևս վտանգված է երկրաշարժերից: Կիսախարխուլ քարերը հեշտությամբ խարխլվում, փլվում են անգամ թեթևակի ցնցումներից:

Եկեղեցին պահպանելու համար անհրաժեշտ է գոնե մաքրել հողաշերտից, իրականացնել ամրացման աշխատանքներ:

Եկեղեցու հարավային պատի մոտ՝ արտաքուստ, գետնին կանգնեցված է խաչքար, որի արձանագրության համաձայն, այն կանգնեցրել է Պողոս Երեցը [3]:

Եղեղեցին և հարակից գերեզմանոցը հաճախակի են ենթարկվում նաև ուժեղ քամիների, ձյան հալոցքային, անձրևաջրերի և սելավային հոսքերի ներգործությանը: Դրանց արդյունքում, արագ տեղի է ունենում տարածքի տեղատարման և ցածրադիր մասերում՝ հողով ծածկվելու հավանականությունը: Ակտիվ է նաև կենսաբանական հողմահարումը:

Մարտունի գյուղում է գտնվում Հին Գետկավանքի ավերակները (Կարմիր Եղցի), որտեղ իր երկրային կյանքն է անցկացրել Մխիթար Գոշը: Երկրաշարժի հետևանքով վանքն ավերվել է, ինչից հետո Մխիթար Գոշը դիմել է Զաքարե և Իվանե իշխաններին՝ խնդրելով նոր տեղ՝ վանքի կառուցման համար, քանի որ հինը վերականգնելն անհնար էր: Զաքարյան իշխանները հատկացրել են Տանձոտի ձորը, ուր կառուցվել է Նոր Գետիկը:

Եկեղեցին հայտնաբերվել է 1980-ական թվականների կեսերին, որից հետո հնագետները մաքրել ու պեղումներ են իրականացրել եկեղեցու տարածքում:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են միջնադարին բնորոշ խեցամանի բեկորներ, որոնք հավաքվել և անձնագրավորվել են: Եկեղեցին և հարակից տարածքներում գտնվող բազմաթիվ կառույցները ձյան հալոցքային ջրերից, նույնիսկ մարդկանց անզգույշ քայլերից կարող են փլուզվել՝ կորցնելով իրենց նշանակությունն ու տեսքը:

Չնայած այն բանի, որ հուշարձանախումբը պահպանվում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից, այնուամենայնիվ, այն բավականին խոցելի է մարդկային գործոնի ազդեցության տեսանկյունից: Անհրաժեշտ է տարածքում սահմանափակել զբոսաշրջային հոսքերը, նաև ցուցանակներ տեղադրել շինությունների հարակից տարածքներում՝ անզգույշ շարժումների և ծանրբեռնվածության հետևանքով փլուզումներից խուսափելու համար:

Ջիլ գյուղի տարածքում պահպանվել է մի կիսավեր հայկական եկեղեցի: Ազգագրագետ Երվանդ Լալայանը (1864-1931թթ.) վկայում է, որ 19-րդ դարի կեսերին այստեղ եղել է ավերված, խոնարհված 4 հայկական եկեղեցի: Երբեմնի հայաբնակ, բազմաբնակիչ այս գյուղի չորս եկեղեցիների ավերակները պահպանվել են առ այսօր: Վերջիններս կառուցված են եղել անտաշ քարերով: Եկեղեցիներն ավերվել են երկրաշարժերի հետևանքով: Վերջնական անհետացումից եկեղեցիները փրկելու համար անհրաժեշտ է իրականացնել ամրացման աշխատանքներ:

Ճամբարակի տարածաշրջանում հանդիպում են նաև սողանքային երևույթներ: Սողանքներն հատկապես ակտիվ են Թթուջրի տարածքում, որտեղով անցնում է նաև տեկտոնական խզվածք: Սողանքը գտնվում է հանքային ջրի ելքի և Անհայտ զինվորի հուշարձանի անմիջապես թիկունքում, որն ավելի ակտիվացել է ջրազծի անցկացման հետ կապված: Սողանքը կա-

րող է վտանգել ոչ միայն այս հուշարձանների գոյությունը, այլև փակել գետի ճանապարհը, որն հոսում է հարակից տարածքով:

Հուշարձանի դիմաց, ճանապարհի աջ կողմում գտնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը բացվել և օծվել է 2017 թ-ին: Թթուջրի Սուրբ Աստվածածինը Ճամբարակի տարածաշրջանում թվով երրորդ գործող եկեղեցին է: Թեև եկեղեցին նորակառույց է, սակայն այն նույնպես կարող է վնասվել սողանքից:

Ինչպես նշեցինք, Թթուջուրը գտնվում է նաև տեկտոնական խզվածքի վրա, որի պատճառով այստեղ կարող են լինել ուժեղ երկրաշարժեր, որոնց հետևանքով կվնասվեն նաև վերոնշյալ հուշարձանները:

Ճամբարակի տարածաշրջանում հաճախակի են ուժեղ քամիները, որոնց ուժգնությունը երբեմն հասնում է 28 մ/վրկ-ի՝ բանուկ ճանապարհի վրա: Քամիների ավերիչ ազդեցությունը մեծ է նաև պատմաճարտարապետական հուշարձանների վրա: Քամիների ազդեցության պատճառով հուշարձանների տարածքը հաճախակի ենթարկվում է հողմնահարության, ծածկվում հողաշերտով և խաչքարերը՝ վնասվում:

Ճամբարակ խոշորացված համայնքում Հուշարձանների վրա մեծ ազդեցություն ունեն ինչպես սելավային հոսքերը, այնպես էլ անձրևաջրերն ու ձյան հալոցքային ջրերը:

Սելավագոյացման ակտիվ գոտին Սևանա լճի սելավաբեր շրջանում տեղադրված է 2300-2800 մ բացարձակ բարձրություններում: Սևանի ավազանում ըստ վտանգավորության աստիճանի առանձնացնում են.

1. *առաջին կարգի վրանգավոր սելավներ*, որոնք բնորոշվում են ուժեղ կամ միջին սելավաբերությամբ, մեծ մասշտաբներով, բարձր հաճախականությամբ և տնտեսության օբյեկտների նկատմամբ լուրջ սպառնալիքով: Այս կարգի սելավային հոսքերից են Ջիլը, Բաբաջանը, Փամբակը, Դարան, Սատանխաչը, Շիշկայան և այլն:
2. *երկրորդ կարգի վրանգավոր*, որոնք բնորոշ են միջին մասշտաբի սելավաբերությամբ, չափավոր հաճախականությամբ և սպառնում են բնակելի առանձին շենքերի, ճանապարհների և այլն: Օրինակ՝ Դրախտիկ, Սպիտակաղբյուր, Արտանիշ, Սարիգետ, Կապույտջուր, Քյասաման, Կարաիման, Ջանահմեդ սելավային հոսքերը:
3. *երրորդ կարգի վրանգավոր*, որոնք հանդես են գալիս փոքր սելավաբերությամբ և թույլ հաճախականությամբ: Այս կարգի սելավային հոսքերից են՝ Գոմաձորը, Արեգունու լեռնաշղթայի սևանահայաց լանջերի հեղեղատները և այլն [1]:

Ճամբարակի տարածաշրջանի թեք լանջերի վրա հաճախակի են հանդիպում նաև քարաթափումները, որոնք կարող են վնասել խաչքարերին, Գետիկի նորակառույց եկեղեցուն, որի պահպանության համար անհրաժեշտ է պարիսպներն ավելի բարձրացնել՝ քարաթափվածքներից պաշտպանելու համար:

Այն խաչքարերի հատվածը, որոնք գտնվում են բանուկ ճանապարհների վրա, անհրաժեշտ է ցանցավանդակներով առանձնացնել, ինչը կարող է օգնել ոչ միայն ջրային և սելավային հոսքերի ժամանակ, այլև ճանապարհային աշխատանքների և ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում վնասվելուց զերծ մնալուն:

Ջիլ համայնքի սկզբնամասում՝ գյուղի մուտքի մոտ, մեծ հաստաբուն փչակով վիթխարի տանձենու շուրջ վերջին շրջանում կառուցված է գեղեցիկ խաչարձան-աղոթատեղի: Այստեղ

տեղադրվել է նաև Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Խաչակապ՝ Կուշչի գյուղի Սբ. Թարգման-
չաց եկեղեցու բակից բերված խաչքար: Ծառը և հարակից խաչքարերը յուրօրինակ սրբա-
տեղի են դարձել համայնքի բնակչության համար: Շատերը հավատում են, որ ծառը երա-
զանքներ է իրականացնում:

Տարածքը, որտեղ գտնվում են ծառը և հարակից խաչքարերը բանուկ ճանապարհի վրա
է, այդ տարածքում ուժեղ քամիները կրում են հաճախակի բնույթ, որոնց արագությունը երբեմն
կարող է գերազանցել 24 մ/վրկ-ը: Դրանք կարող են վնասել ծառը և խաչքարերը, ինչպես նաև
անմիջապես հարակից տարածքով հոսող Ջիլ գետակը, որը երբեմն հորդանում է և կարող է
վերածվել ջրառատ գետի: Գետակը կարող է դուրս գալ ափերից և ողողել հուշարձանախմբի
տարածքը: Մեծ է նաև մարդկային գործոնը: Շատերը ծառի բացվածքում կամ խաչքարերի մոտ
մոմ են վառում, որը կարող է հրդեհի պատճառ դառնալ:

Անհրաժեշտ է արգելել ծառի փչակում և հարակից տարածքում մոմավառությունը, ինչպես
նաև հուշարձանախումբը պատնեշով առանձնացնել գետի ողողատից, որպեսզի, հեղեղում-
ների ժամանակ, ջուրը չլցվի հուշարձանախմբի տարածք: Ցանկալի կլինի հարակից տարած-
քում ծառատունկի իրականացումը՝ քամուց և ջրից պաշտպանելու համար:

Պատմամշակութային հուշարձանները տուժում են նաև մարդկային գործոնի ազդեցու-
թյունից, որոնց այս հոդվածում չենք անդրադարձել:

Գեղարքունիքի մարզում, հատկապես մարզի սահմանամերձ համայնքներում, բնական
աղետալի երևույթներից հաճախ լինում են երկրաշարժեր, սողանքներ, սելավներ, ուժեղ
քամիներ, որոնք մեծ վնաս են հասցնում նաև պատմաճարտարապետական հուշարձաններին:
Մեր ուսումնասիրած համայնքներում հուշարձանների մեծ մասը գտնվում են կիսականգուն
կամ չափազանց անմխիթար վիճակում, որոնց փլուզումն ու քայքայումն ինտենսիվորեն շարու-
նակվում են նաև մեր օրերում: Աղետների տեսանկյունից, հուշարձանների բավարար ուսումնա-
սիրություն չի իրականացվել (համենայն դեպս մենք չենք հանդիպել այդպիսի ուսումնասիրու-
թյունների): Անհրաժեշտ է համալիր ուսումնասիրվեն, քարտեզագրվեն և քայլեր ձեռնարկվեն
յուրաքանչյուր հուշարձանի պահպանության համար: Մեր կողմից կատարված առաջարկու-
թյունները կարող են օգնել դրանց պահպանությունն ավելի արդյունավետ կազմակերպելու
համար: Սակայն առաջնահերթ է բնակչության շրջանում իրենց համայնքների սահմաններում
գտնվող հուշարձանների մասին տեղեկատվության տարածումն ու բնակչության միջոցով
հուշարձանների պաշտպանության կազմակերպումը:

Տեղին է պնդել, որ պատմաճարտարապետական հուշարձանների մասին տեղեկատվու-
թյան տարածումը բնակչության, հատկապես դպրոցահասակ երեխաների և երիտասարդների
շրջանում կարևոր է, ինչը հիմք կհանդիսանա անվտանգության մշակույթի ձևավորմանն ու
զարգացմանը: Անհրաժեշտ է դպրոցահասակ երեխաների և երիտասարդների մասնակ-
ցությամբ հաճախակի մաքրել հուշարձանների տարածքը՝ նաև բույսերից, պատնեշապատել
կամ իրականացնել ծառատնկումներ՝ սելավներից և քամուց պաշտպանելու համար:

Այսպիսով, ելնելով վերոգրյալ առաջարկություններից, կարելի է նաև՝

1. սահմանափակել մարդկանց, այդ թվում զբոսաշրջիկների հոսքն այնպիսի հուշարձան-
ների տարածք, որոնք կարող են վնասվել նույնիսկ անզգույշ քայլերի և հետևանքով
(Կարմիր Եղցի):

2. Վերանորոգել կամ գոնե ամրացնել խարխիված պատերը՝ երկրաշարժերից պաշտպանելու համար:
3. Իրականացնել ծառատունկ հուշարձանների հարակից տարածքներում՝ սելավներից, սողանքից, քարաթափումներից ու քամիներից պաշտպանելու համար:
4. Պարբերաբար իրականացնել մաքրման աշխատանքներ հուշարձանների տարածքում՝ ներգրավելով համայնքների բնակչությանը, հատկապես դպրոցահասակներին և երիտասարդներին, ինչը կօգնի ձևավորել անվտանգության մշակույթ հիշյալ շրջանակներում:

Գրականություն

1. «Աշխարհագրության հարցեր» գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Պրակ 1-2, Եր., 1984. - էջ 3:
2. **Мягков С.М.**, География природного риска, издательство Московского университета, 1995. 220 с.
3. www.chambarak.am Դիտում՝ 06.02.2023.

Л.А. Мкртчян

ЗАЩИТА ПАМЯТНИКОВ ОТ ОПАСНЫХ ЯВЛЕНИЙ – НЕОБХОДИМОСТЬ

Историко-архитектурные памятники – памятники уникальной, эстетической ценности, которые из-за невнимания подвергаются влиянию различных катастрофически опасных явлений.

Влияние вышеупомянутых явлений на памятники малоизучены, в следствие чего на них вообще не обращается никакого внимания. Ситуация еще более осложняется в приграничных общинах, где обнаружение и сохранение армянских следов в нынешних условиях является чрезвычайно важной и актуальной задачей.

Ключевые слова: *Кармир Ехци, Чамбарак, Ттуджур, Джил, хачкар, природное опасное явление.*

L.A. Mkrтчyan

THE PROTECTION OF MONUMENTS FROM HAZARDOUS PHENOMENA- A NECESSITY

Historical-architectural monuments are unique, aesthetic value, which are also affected by various hazardous phenomena.

The influence of mentioned phenomena on the monuments is poorly investigated, and no attention is focused on them. The situation is even more complicated in the border communities, where the discovery and preservation of Armenian traces in the current conditions is an extremely important and urgent task.

Keywords: *Karmir Yeghtsi, Chambarak, Ttujur, Jil, Khachkar, natural disaster.*

Սկրտչյան Լալա Արշալույսի – դասախոս (Գավառի պետական համալսարան).

Ներկայացման ամսաթիվը՝ 07.02.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 21.02.2023